


«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14:



Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ



ԼԳ տարի (33-ամեակ)
2026-ի Տարեկան Բացառիկ

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Բովանդակություն

Խօսք՝ Հովիի եւ Հոգաբարձութեան	էջ 3
Մեր խօսքը	4
Շնորհակալական նամակ ՀՕՄ-էն	5
https://www.sourphagop.org	6-7
https://www.facebook.com/sourphagop.org	
https://www.instagram.com/sh_sundayschool/	
Հակիրճ տեղեկութիւններ 2025-26 տարեշրջանի մասին	8
Ձեռնարկներ եւ արտադասարանային աշխատանքներ՝	10
Աշակերտական ներկայութեան տախտակներ	11-12
Ամփոփում 2025-26 (46-րդ) տարեշրջանի Գործունէութեան	12
2025-26 Տարեշրջանի կամաւոր կազմը	40

ՎԵՐԱՄՈՒՏ՝

13 Սեպտ. 2026

Ժամը 10:30



**ՄՈՒՐԲ ՅԱԿՈԲ
ԱՌԱՋ. ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻ**

Église Arménienne **Sourp Hagop** Armenian Church

29 Ապրիլ 2026

008/25-26

**Սիրելի տնօրէնութիւն, ուսուցչական կազմ,
ծնողներ եւ աշակերտ-աշակերտուհիներ,
Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի,
Աստ,**

Սիրելիներ,

Այս ժամանակներուն, իրապէս դժուարացած է ընտանիք ըլլալը, եւ մեր պարագային՝ հայօրէն ընտանիք ըլլալը: Երբ «հայօրէն» կ'ըսենք, կը հասկնանք նաեւ՝ քրիստոսաշունչ: Կեանքի վազքն ու հեւքը ու այլեայլ խնդիրներ եւ արգելքներ՝ ծնողները բեռնատրած են...:

Մեր Կիրակնօրեան, ինչպէս այլ Կիրակնօրեաներ՝ աջակցութիւն են այն ծնողներուն, որոնք կը փափաքին իրենց զաւակներուն ականջները ունկնդիր պահել աստուածային խօսքին, այլեւ մեր հայրերու աւանդութեան՝ որ շնչաւորուած է Տիրոջ Հոգիով: Կիրակնօրեաները՝ դէպի համայնքային եկեղեցիներ ուղիներ են: Այս գիտակցութեամբ կը գործէ Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը:

Արդ, օրինեալ ըլլայ ձեր նուիրումը՝ սիրելի տնօրէնութիւն եւ դաստիարակչական կազմ Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի: Իսկ դուք, գովելի ծնողներ, որ ձեր զաւակները կը վստահիք մեր Կիրակնօրեայ դպրոցին՝ անոնց քայլերը ուղղելով դէպի Յիսուս-Իմաստութեան հոգեկրթարանը, որ լի է շնորհով ու ճշմարտութեամբ: Աշակերտ-աշակերտուհիներուն ալ կ'ըսենք. միշտ յիշեցէք, որ Յիսուս փոքրիկները օրինակ կը բերէ՝ յայտնելու համար պայմանը Երկնքի արքայութիւն մուտքին...:

Բարեմաղթութիւններով՝

Հովիւ եւ հոգաբարձութիւն
Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻՈՅ

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ 33 Կիրակիներ:

Այս տարի նաեւ 33-րդ տարեդարձն էր մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ Սուրբ Յակոբի տօնին՝ Դեկտեմբեր 2025-ին մեր կայքէջին՝ www.sourphagop.org-ին 25-րդ տարեդարձն էր:

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»: Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքը, որ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն է, կը մնայ հիմը մեր եկեղեցւոյ պայծառութեան: Այն եկեղեցիները, որոնց մանուկները արգելքներ ունին Յիսուսին երթալու, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին. մանաւանդ Գանատայի մէջ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, ընդհանրապէս կրօնական դաստիարակութեան սահմանափակումով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ Հայ Քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»: Ասկէ 97 տարիներ առաջ, Կիլիկիոյ Սահակ Բ. Խաչայեան Կաթողիկոս իր իմաստութեամբ, որպէս նշանաբան ունենալով Յիսուսի այս խօսքը, մէկ նախադասութեամբ կ'աղերսէր հայ մայրերուն որ իրենց զաւակները Քրիստոսի մօտեցնեն: Ան Քրիստոսի խօսքով կը սաստեր բոլոր անոնք որոնք տարբեր ձեւերով արգելք կը հանդիսանային որ հայ ազգին մանուկները մօտենան Քրիստոսի:

Այս տարուան ընթացքին, բաղդատած նախորդ տարուան, մեր արձանագրուող աշակերտներուն թիւը 99-էն 122-ի բարձրացաւ եւ իւրաքանչիւր Կիրակի օրուան միջին ներկայութիւնն ալ 61-էն 68-ի: Այս տարուան ընթացքին, ուրախ ենք յայտարարելու, թէ Մանկապարտէզի, Նախակրթարանի եւ Երկրորդականի աշակերտներու աճ արձանագրեցինք:

Աստուծոյ կամքով՝ մեր 47-րդ տարեշրջանի վերամուտը, ինչպէս ամէն տարի, կը սկսինք Խաչվերացին՝ որ այս տարի Սեպտեմբեր 13, 2026-ին է: Յոյսով ենք որ մեծագոյն թիւով աշակերտներ՝ մանկապարտէզի, նախակրթարանի, եւ երկրորդականի մէջ պիտի միանան մեր Կիրակնօրեայ Դպրոցին:

Փառք՝ Աստուծոյ, Պայծառութիւն՝ Հայ եկեղեցւոյ:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական կազմ:



ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ARMENIAN RELIEF SOCIETY OF CANADA (A.R.S.) Inc.
LA CROIX DE SECOURS ARMÉNIENNE DU CANADA (A.R.S.) Inc.

ՄԱՍՆԱՃԻՂԵՐ
CHAPTERS · CHAPITRES

2025-2027.102
5 Մայիս, 2026

Գեմպրիձ Մեդրի
Cambridge Meghri

Յարգելի՛
Սրբ. Յակոբ Կիրակնօրեայ վարժարանի
Տնօրենություն, ուսուցչական կազմ եւ աշակերտներ

Համիլթոն Արև
Hamilton Arev

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչությունը երախտագիտութեամբ
ստացաւ ձեր կատարած 500 տոլարի նուիրատուութիւնը, ի նպաստ
«Զոհուած հերոսներու զաւակներու» ծրագրին մէկ որք հովանաւորելնուդ
առթիւ:

Լաւալ Շուշի
Laval Shoushi

Միսիսսոկա Առագաստ
Mississauga Arakast

Շնորհակալութիւն, որ ձեր այս արարքով, դուք բարեսրտութիւն կը
սերմանէք մեր մատղաշ սերունդին մէջ:

Մոնթրէալ Սօսէ
Montreal Sosse

Բոլորիդ քաջառողջութիւն կը մաղթենք, եւ փայլուն ապագայ մեր
վարժարանին ու աշակերտութեան:

Օթթաւա Սեան
Ottawa Sevan

Յաջողութեան լաւագոյն մաղթաքներով՝

Սենթ Գաթրինձ Արազ
St-Catharines Araz



Թորոնթօ Ռոսինա
Toronto Roubina

Վանգուվըր Արազ
Vancouver Araz

CANADA

Ուինձըր Ռոսինա
Windsor Roubina

Հայ Օգնութեան Միութեան
Գանատայի Շրջանային Վարչութիւն

https://www.sourphagop.org/

Մեր կայքէջը համացանցի վրայ իր գոյութեան 26-րդ տարին մտաւ 2025-ի Սուրբ Յակոբի օրը: Տարիներու ընթացքին նորոգեցինք մեր կայքէջին տեսքը ու ճոխացուցինք անոր բովանդակութիւնը: Այս տարի հիմնովին փոխեցինք մեր կայքէջը եւ անոր տուիւնք նոր տեսք:



Մեր Գործածած Դասագիրքեր

Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի դասընթացները կը ինտեկն «Կիրակնօրեայ Դպրոցներու Տարեկան Ուղեցուց-Ճրագիր»-ին (այժմ) Դասարկումները կը սրբածեն «Կիրակնօրեայ Դպրոցի Դասեր» դասագրքերու շարքը. ինչպէս նաեւ Gospel Light կազմակերպութեան կողմէ պատրաստուած եւ World Vision-ի կողմէ հրատարակուած դասագիրքերու. հարգուած տարբերակը ուր ներկայիս են Պայ Առաքելական Եկեղեցւոյ տարբերու վարցն ու կարգ մը երեսօտր տներն ու անտերութիւնները: Այս փոփոխութիւնը նաեւ ունեն իտալական գիրքի համար «Մաշտոցի Ուղեցուց»:

- Մանկապարտէզ
- Կարճատեւ
- Երկտարեան



Տարեկան Ուղեցուց-Ճրագիր Կիրակնօրեայ Դպրոցներու

Մանկապարտէզ

Մաշտոցի Արձագանգ

Մեր ամսաթերթը



Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի պատմական պարտնապարտը կը կրօն «Մաշտոցի Արձագանգ»: Ան առաջին անգամ յայտնուեց 1992-ին եւ զրոյց կրկնուեց որպէս 13 քիւն յայտնուեց մինչեւ 1994-ին: 1998-էն մինչեւ 2002 «Մաշտոցի Արձագանգ» կարճատեւ հրատարակուեցաւ տարեկան քրտով մը ու կը դադարիւնէր որպէս անտերութիւն անտերութիւն: 2002-2003 տարեշրջանի սկիզբը, որպէս պարտնապարտը վերածել անտերութիւն:

2025-2026 տարեշրջան

Մարտ	Դեպտեմբեր	Նոյեմբեր
Մայիս	Յունիս	Յուլիս
Յուլիս	Սեպտեմբեր	Սեպտեմբեր

Բացառիկներ

2024-2025	2023-2024	2022-2023	2021-2022	2020-2021	2019-2020
2018-2019	2017-2018	2016-2017	2015-2016	2014-2015	2013-2014
2012-2013	2011-2012	2010-2011	2009-2010	2008-2009	2007-2008

<https://www.facebook.com/sourphagop.org>

Այս տարի կանոնաւորաբար թարմացուցինք մեր FACEBOOK-ի եւ Instagram-ի էջերը:



Sourp Hagop Sunday School U. Յակոբ Կիրակօրեայ Դպրոց

962 followers • 89 following
Դպր. Եկեղեցւոյ Ա. Յակոբ Կիրակօրեայ Դպրոց
Religious organization



[Message](#) [Following](#)
[Search](#)

https://www.instagram.com/sh_sundayschool/




sh_sundayschool

Սուրբ Յակոբ Կիրակօրեայ Դպրոց
165 posts 464 followers 49 following

Religious organization
Sourp Hagop Sunday School
«Ձգեցէ՛ք որ մանուկները ինձի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց...» (Մր 10.14)
Հաւատք, Յոյս, Սէր
3400 Rue Nadon, Montreal, Quebec H4J 1P6
sourphagop.org

[Edit profile](#) [View archive](#)



ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ 2025-26 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ եկեղեցւոյ հովանաւորութիւնը:

46-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2025-26 տարեշրջանը 46-րդ տարեշրջանն էր: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնը Խաչվերացի Կիրակին 14 Սեպտեմբեր 1980-ին եւ յաջորդական 46-րդ տարեշրջանը բոլորեց այս տարի: Այս տարեշրջան սկսաւ Կիրակի 14 Սեպտեմբեր 2025-ին եւ տեւեց մինչեւ Մայիս 24, 2026: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի օրերը 10:30-13:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ Մանկապարտէզի 1, Նախակրթարանի 5 եւ Երկրորդականի 2 դասարաններ:

33-ամեակ «Մաշտոցի Արձագանգ»-ին

Մեր 2025-26 տարեշրջանի ընթացքին նաեւ՝ 33-րդ տարին ըլլալով, հրատարակեցինք մեր պարբերաթերթ «Մաշտոցի Արձագանգ»ը ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»ը կը տպուի եւ PDF ձեւով կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ:

25-ամեակ www.sourphagop.org-ին

10 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ www.sourphagop.org-ը: Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները.

Մեր մասին, Սուրբեր, Տօներ, Գիրքեր (ուր կրնաք գտնել մեր դասագրքերը, Ազգապատումը իր 3 հատորներով, Բառարան, Եկեղեցական Բառարան, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարանը եւ Կրօնական Գիտելիքները), Ժամանակացոյց, «Մաշտոցի Արձագանգ» ի բոլոր թիւերը, Հայերէն տառատեսակ, Ճաշու Աւետարան, Տօներ, Պարբերաթերթ, Կապեր, Կարծիքդ, Խաղեր, Զարգացման Մրցում, Church Timeline, Daily Bible:

Ս. Ծննդեան ճրագալոյցի ընթերցումներ

Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցիչներն ու երկրորդականի աշակերտներ Յունուար 5-ին եկեղեցւոյ մէջ կատարեցին մարգարեական ընթերցումները:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2025-26 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 122 էր, իսկ շաբաթական ներկայութիւնն էր 68՝ բաժնուած 8 խումբերու:

ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2025-26 տարեշրջանին ունեցանք 8 տարբեր բաժանումներ հետեւեալ ձեւով.

Խումբ

Բողբոջ եւ Կոկոն

Ծաղիկ եւ Նախակրթարան Ա.

Նախակրթարան Բ. եւ Գ.

Նախակրթարան Դ .

Նախակրթարան Ե.

Նախակրթարան Զ.

Երկրորդական Ա. Բ. եւ Գ.

Երկրորդական Դ. եւ Ե.

Երկրորդականի Պատասխանատու

Երգերու եւ շարականներու ուսուցում

«Մաշտոցի Արձագանգ»

Կայքէջի պատասխանատու

FACEBOOK-ի եւ INSTAGRAM

Տնօրէն

Դաստիարակ

Աննա-Մարիա Շամոյեան

Սարին Խշիշեան

Վանի Թոքաթլեան

Յասմիկ Նաճարեան

Թամար Գիզիրեան

Շողիկ Նաճարեան

Սդէֆան Տէմիրճեան

Հրակ Պանքեան

Ալեքս Տէմիրճեան

Մհեր Պանքեան

Առէն Պապիկեան

Սեւակ Պապիկեան

Թորոս Պապիկեան

Առէն Պապիկեան

Ռիմա Խարշաֆճեան

Թորոս Պապիկեան

Օգնականներ՝ Սեւակ Ստեփանեան (Իսթիպաթ), Յարութ Չուլճեան, Գրիգոր Պէքերեան, Մհեր Ստեփանեան, Նայիրի Ժուքաթլեան եւ Լեւոն Չաքարեան

Կազմը գումարեց ժողովներ, որոնց ընթացքին արծարծուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներու վերաբերող եւ այլ նիւթեր:

ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱՆ

2025-26 տարեշրջանին Կիրակնօրեայ Դպրոցի առօրեան ընթացաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցումաձքին համաձայն լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր դասաւանդուեցան Ս. Գրային, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին

Տէրունական աղօթքի, մաղթանքներու եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները բաժնուեցան իրենց խումբերուն: Պահերը ընթացան հետեւեալ ձեւով.


- Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսներու ուսուցում
- Բարոյալից պատմումաձքներու ներկայացում
- Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում
- Ճաշու Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն
- «Մաշտոցի Արձագանգ»-ի սերտողութիւն:

Դասարանային բաժին


Դասաւանդուեցաւ ըստ դասագիրքերու:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	
7 Սեպտեմբեր 2025	Նոր աշակերտներու արձանագրություն
14 Սեպտեմբեր	Տարեսկիզբ եւ վերամուտ
28 Սեպտեմբեր	Վարժարանի աշակերտությունը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդություն ստացաւ
12 Հոկտեմբեր	Թարգմանչաց տօնին յատուկ յայտագիր
21 Դեկտեմբեր	Ս. Ծննդեան Տօնակատարություն:
5 Յունուար 2026	Ս. Ծննդեան Ճրագալոյցի Պատշաճեցուած ընթերցումներ մատուցմամբ մեր աշակերտներուն
15 Փետրուար	Վարդանանց եւ Բուն Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարություն
Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունեցաւ իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը.	
Ա. շաբաթ	Chips
Բ. շաբաթ	Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր
Գ. շաբաթ	Տուրմ
Դ. շաբաթ	Կագային խմիչքներ
Ե. շաբաթ	Շաքար
Զ. շաբաթ	Ծամոն
Է. շաբաթ	Հակիթ
28 Մարտ	Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցչական կազմը իր մասնակցությունը բերաւ Սուրբ Յակոբ եկեղեցոյ Հոգատար Յանձնախումբին, կազմակերպած «Փոքրերու Ծաղկարգարդի Հաւաքոյթ»ին: Դաստիարակչական բնոյթով սոյն ձեռնարկին մասնակցեցան աւելի քան 250 փոքրիկներ:
29 Մարտ	Ծաղկագարդ՝ Կիրակնօրեան փակ էր,
5 Ապրիլ	Ս. Զատիկ Կիրակնօրեան փակ էր:
10 Մայիս	Մայրերու տօն:
21 Մայիս	Աւարտական դասարանի աշակերտներու տարեվերջի ներկայացում՝ «Քրիստոնէական Դաստիարակչութիւնն ու Հայ մատենագրութիւնը»:
24 Մայիս	Ամավերջի հանդէս եւ Տարեփակ


Աշակերտական Ներկայութեան Տախտակներ



2025-26 տարեշրջանի իւրաքանչիւր դասարանի արձանագրութիւն եւ միջին ներկայութիւն



2025-26 տարեշրջանի իւրաքանչիւր Կիրակի օրուայ Արձանագրուած / Ներկայ



ԱՄՓՈՓՈՒՄ 2025-26 (46-րդ) ՏԱՐԵՇՐՁԱՆԻՆ



Բողբոջ և Կոկոն



Բողոք եւ Կոկոն



Ծաղիկ եւ Նախակրթարան Ա.



Նախակրթարան Բ. և Գ.



Նախակրթարան Դ.



Նախակրթարան Ե.



Նախակրթարան Զ.



Երկրորդական Ա. Բ. և Գ.



Երկրորդական Ե.

Սեպտեմբեր 7 տեղի ունեցավ նոր աշակերտներու արձանագրութիւնը:

14 Սեպտեմբեր 2025-ին արձանագրութիւնները շարունակուեցան եւ տեղի ունեցաւ մեր 2025-26 Տարեշրջանի (46-րդ) Վերամուտը: Աշակերտները նախ սերտեցին այս տաղաւար տօնը, իսկ ետքը զանազան ձեռնարկներով նշելու համար

Խաչվերացը, խաչեր պատրաստեցին: Նախքան որ մեկնին, իրաքանչիւր աշակերտ ստացաւ ռեհանի բոյս, ըստ հայկական աւանդութեան: Արձանագրութիւնները շարունակուեցան Սեպտեմբեր 21-ին եւ 28-ին: Մեր Գործունէութիւնը, ամէն Կիրակի Ժամը 10:30 – 1:00 հետեւեալ ձեւով:

10:30-11:00

Յաւար

11:00 -11:10

«Յայր մեր», Աղօթք, Օրուան խորհուրդը, Կիրակնօրեայ Դպրոցներու մաղթերգ

11:10 - 11:45

Ա. դասապահ,

11:45- 12:20

Բ. դասապահ,

12:20-12:55

Գ. դասապահ

12:55-13:05

Աղօթք, «Կեցցէ՛ մեր Կիրակնօրեայ Վարժարան...», Արձակում:



21-ին Կիրակնօրեայ Դպրոցը արձանագրեց նոր աշակերտներ եւ շարունակեց իր գործունեութիւնը ժամը 10:30-13:00: Աշակերտները, ըստ իրենց դասարանային բաժանումներուն, ունեցան 3 դասապահեր: Երգեցողութեան պահուն վերաքաղ մը ըրին իրենց գիտցած երգերուն: Լսարանային դասապահի ընթացքին անդրադարձան «Մաշտոցի Արձագանգ»ի Սեպտեմբեր 2025 թիւին մէջ տեղ գտած նիւթերուն (**Բարեկենդան Վարագայ Սուրբ Խաչի**) եւ Դասարանային պահուն, իւրաքանչիւր դասարան ըստ իր ծրագրին, ունեցաւ իր դասաւանդութիւնը : Տարբեր դասարաններու նիւթերն էին Ս. Կոյս Մարիամ, Ստեղծագործութիւն, Վերջին Ընթրիքը (պատրաստուելու համար յաջորդ Կիրակի եկեղեցոյ մէջ Սուրբ Հաղորդութիւն ստանալու), Վարագայ Սուրբ Խաչ, Ասուածաշունչի ներածական:



28 Մեպտեմբերին Կիրակնօրեայ Դպրոցը եկեղեցի ուղղուեցաւ, ուր աշակերտները, ուսուցիչներն ու տնօրէնը Ս. Հաղորդութիւն ստացան: Վերադառնալով դպրոց, աշակերտները իրենց դասարաններուն մէջ անդրադարձան **Ս. Զաղորդութեան խորհուրդին**, ինչպէս նաեւ **Սուրբ Գեորգին** եւ **Վարազայ Ս. Խաչին**: Արձանագրութիւնները պիտի շարունակուին եւս երկու Կիրակի:



ՅՈՒՆԻՍԿՈՒՄ 5

Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները, լսարանային պահուն, աշակերտները անդրադարձան Յիսուսի **72 աշակերտներ**ուն եւ ինչպէս որպէս Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտներ ինչպէս պէտք է աշակերտել Յիսուսի:

Դասարանային պահը շարունակեցին ըստ դասագրքերու: Աշակերտները նաեւ ստացան «Մաշտոցի Արձագանգ»-ի Հոկտեմբեր 2025-ի թիւը:

12 նշելու համար **Թարգմանչաց սուրբերուն տօնը**, դասարանները կատարեցին զանազան ձեռնարկներ եւ երգեցողութեան պահուն երգեցին «Այբ, Բեն, Գիմ... եւ սորվեցան “Որք զարդարեցին...” շարականը: Այս առիթով, մեր գրադարանի գիրքերու ցուցահանդէս մը կազմակերպեցինք, եւ **իւրաքանչիւր աշակերտ հայերէն գիրք մը ստացաւ որպէս նուէր**: Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները սորվեցան Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց խօսքերը.

«Առանց **մեսրոպեան ոճով մարդակերտումի**, խախուտ են բոլոր կերտումները մեր ազգային կեանքին, ինչպէս խախուտ են աւագահիմն ու հողաշէն կառոյցները աշխարհի...»:

«Հայ Գիրքը միտո՞ւն է մեր ժողովուրդի զաւակներուն համար: **Ան, որ Հայ Գիրք կը կարդայ, կը միւռնուհի հայուրեամբ»:**

19 Աշակերտները տօնեցին **4 Ս. Աւետարանիչներուն (Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս)** տօնը՝ եւ շարունակեցին Ս. Թարգմանչաց երգեր սորվիլ:

26 Աշակերտները տօնեցին **Ս. Խաչի գտնուելուն տօնը** եւ շարունակեցին Ս. Թարգմանչաց երգեր սորվիլ: Դասարանային պահուն իւրաքանչիւր դասարան շարունակեց իր ծրագիրը:







ՆՈՅԵՄԲԵՐ

Լսարանային պահերուն՝

2 աշակերտները անդրադարձան **Ամենայն Սրբոց** տօնին եւ ստացան «Մաշտոցի Արձագանգ»-ի Նոյեմբեր 2024 թիւը:

9 Ս. Գաբրիել եւ Ս. Միքայել Հրեշտակապետերու տօնին:

16 Յիսուսի առաքեալներէն **Ս. Անդրեասի եւ Ս. Փիլիպպոսի** ինչպէս նաեւ **Յիսնակի Պահքի Բարեկենդանին**:

23 եւ 30 Ս. Գրիգոր Արքայազնի Սրբազելագործին եւ Ս. Նիկողայոսին (որ նախատիպարն է Santa Claus-ին): Դասարանային պահերուն շարունակեցին ըստ դասագրքերու եւ երաժշտութեան դասապահին Սուրբ Ծննդեան երգեր սորվեցան:





Դեկտեմբեր 7-ին լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան **Սուրբ Նկողայոսին** ինչպես նաև **Սբ. Յակոբի Բարեկենդանին**, ունեցան երաժշտութեան պահ եւ պատրաստուեցան Սբ. Ծնունդի յայտագրին: **14**-ին լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան **Սբ. Յակոբին**, եւ պատրաստուեցան Սբ. Ծնունդի յայտագրին: **21**-ին **Սուրբ Ծննդեան Յայտագիր**:



Շնորհակալութիւն՝


ՀՕՄ-ի Մոնթրէալի «ՍՕՍԷ» Մասնաճիւղին, որ այս տարի եւս շնորհաւորեց մեր Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը եւ մեր աշակերտներուն որպէս կադանդէք նուիրեց 500 տոլար:






ՅուՆուար 5 Ս. Ծննդեան **ճրագալույցի** ընթերցումները կարդացին Ս. Յակոբ Կիրակնորեայի **աշակերտ-աշակերտուհիները**: Նոր տարուան եւ Մբ. Ծննդեան դադարէ ետք **11**-ին Կիրակնորեայ Դպրոցը վերսկսաւ իր սովորական գործունէութեան՝ ամէն Կիրակի ժամը 10:30_13:00: **18**-ին Կիրակնորեայ Դպրոցը շարունակեց իր սովորական գործունէութիւնը: **25**ին Կիրակնորեայ Դպրոցը շարունակեց իր սովորական գործունէութիւնը, լսարանային, դասարանային եւ երգեցողութեան պահերով:





ՓԵՏՐՈՒԱՐԻ-ին Կիրակնօրեայ Դպրոցը շարունակեց իր սովորական գործունեությունը, ժամը 10:30 - 13:00, լսարանային (ուր անդարդառցանք Ս. Սարգիսին) դասարանային եւ երգեցողութեան պահերով: Աշակերտներուն **Ս. Սարգիսի «հալլայ» բաժնուլեցաւ:** **8-**ին Կիրակնօրեայ Դպրոցը շարունակեց իր սովորական գործունեությունը, ժամը 10:30-13:00: Լսարանային պահուան ընթացքին անդրադառձան Ս. Սահակ Պարթեւին, եւ **Տեառնընդառաջ**ին: Դասարանային պահերը ընթացան ըստ դասագրքերուն: **15-**ին տօնեց **Վարդանանց եւ Բուն բարեկենդան:** Աշակերտներն ու ուսուցիչներէն ոմանք ծպտուեցան, PIZZA կերանքորպէսզիչնոռնանքորյաջորդօրը **ՄեծՊահք**ըկըսկսի: Աշակերտներէն իւրաքանչիւրը ստացաւ իրենց ծոմապահութեան ցանկը, նաեւ հաւկթաձեւ գանձանակ մը որուն մէջ որոշ գումար մը հաւաքէ **բարեգործական** նպատակի մը համար: **22-**ին Կիրակնօրեայ Դպրոցը շարունակեց իր սովորական գործունեությունը, ժամը 10:30-13:00: Լսարանային պահուան ընթացքին անդրադառձան **Արտաքսման Կիրակի**ին եւ **Ս. Թեոդորոս Զօրավար**ին:





Մարտ 1-ին աշակերտները անդրադարձան **Անառակի Կիրակի**ին, երաժշտության պահ ունեցան եւ դասարանային պահերը շարունակեցին ըստ ծրագրին: **8**ին աշակերտները անդրադարձան **Տնտեսի Կիրակիին, Միջինք**ին, Ինչպէս նաեւ **Ս. Յովհաննէս Երուսաղէմցի, Ս. Յովհաննէս Օձնեցի, Ս. Յովհաննէս Որոտնեցի, Ս. Գրիգոր Տաթևացի** եւ դասարանային պահերը շարունակեցին ըստ ծրագրին: **15**-ին աշակերտները անդրադարձան **ԴԱՏԱԿՈՐԻ Կիրակի**ԻՆ Երաժշտության պահ ունեցան եւ դասարանային պահերը շարունակեցին ըստ ծրագրին: **22**-ին աշակերտները անդրադարձան **ԱՐՏԱՔՍՄԱՆ Կիրակի**ԻՆ , **Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մուտն ի Կիրապին** եւ դասարանային պահերը շարունակեցին ըստ ծրագրին: **28**ին մեծ թիւով աշակերտ ներ, ուսուցիչներ եւ տնօրէնը մասնակցեցան Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ Գործադիր Մարմնի կազմակերպած **Մանուկներու Ծաղկազարդի Հաւաքոյթ**ին:





Ապրիլին 12 լսարանային պահուն աշակերտները անդրադարձան **Նոր Կիրակի**ին (Կրկնագատիկ): Դասարանային պահերը շարունակուեցան ըստ ծրագրին: **19**-ին լսարանային պահուն աշակերտները անդրադարձան **Կանաչ Կիրակի**ին (Աշխարհամատրան), երաժշտութեան պահ ունեցան եւ սկսան պատրաստուիլ ամավերջի հանդեսին: **26**-ին, լսարանային պահուն աշակերտները անդրադարձան **Կարմիր Կիրակի**ին, **Յեղասպանութեան 111**-րդ տարեդարձին եւ խոստացան:

- . Ապրիլ հայադրոջմ կեանք մը
- . Վառպահել հայաստանեայցեկեղեցւոյ տօներն ու ազգային ամանդութիւնները,
- . Լսել, մտիկ ընել ու երգել մեր Հայանուագ շարականներն ու երգերը,
- . Ամուր կառչած փսալ մեր հայավայել բարի բարքերուն ու սովորութիւններուն
- . Կարդալ ու կեանքի վերածել մեր հայագրեալ Աստուածաշունչը
- . եւ մանաւանդ ՍԻՆԵԼ Հայր ամբողջ տարուան ընթացքին:





Մայիս 3 լսարանային պահուն աշակերտները անդրադարձան **Սուրբ**

Խաչի Երեւման Տոնին, Երաժշտութեան պահ ունեցան եւ դասարանային պահը շարունակեցին ըստ ծրագրին: Ուսուցիչները Մայիս 24ի ամավերջի հանդէսին յայտագիրը վերջնականացուցին:

10 լսարանային բաժնին աշակերտները անդրադարձան **Մայրերու Օրուան եւ Զամբարձումին**: Դասարանային եւ երաժշտութեան պահերուն հանդէսի պատրաստութեան փորձերը շարունակուեցան:

17 լսարանային բաժնին աշակերտները անդրադարձան **Երկրորդ Ծաղկազարդին** եւ Ամավերջի հանդէսի փորձ ըրին:

24 Ամավերջի հանդէսի փորձ եւ Հանդես...:





Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի
Տնօրէնութիւնն եւ Ուսուցչական կազմը
հաճոյքով Ձեզ կը հրաւիրեն

Դպրոցին 46-րդ Տարեշրջանի

**Աւարտական Դասարանի
Աշակերտներու Տարեվերջի
Ներկայացում** ին

«Քրիստոնէական Դաստիարակութիւնն
ու Հայ Մատենագրութիւնը՝
Ժ-էն Ի դարերուն»


որ տեղի պիտի ունենայ
 **Հինգշաբթի՝ 21 Մայիս 2026**
 երեկոյեան ժամը **19:00** ին

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցւոյ մէջ:

Սուտքը՝ ազատ:



Հաւատք



Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոց

3401 Olivar-Asselin, Montreal, Quebec, H4J 1L5
Հիմնեալ 1980, Մոնթրէալ

Յոյս

2026-27 Տարեշրջան (47-րդ)


Սէր


→ Արձանագրութիւն (Նոր Աշակերտներու)
Կիրակի՝ 6 Սեպտեմբեր 2026 Ժամը 10:30-1:00

→ Արձանագրութիւն եւ Վերամուտ
Կիրակի՝ 13 Սեպտեմբեր 2026 Ժամը 10:30-1:00
(3 - 16 տարեկաններու համար)

Սեր Գործունէութիւնը, ամէն Կիրակի Ժամը 10:30 – 1:00



 sh_sundayschool

 www.facebook.com/sourphagop.org

 514-513-4224



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ **ԼԳ. ՏԱՐԻ**

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

այս թիւը կը գտնուին նաեւ համացանցին վրայ

<https://www.sourphagop.org/Documents/Mashdots/Special%20Issues/vol33.pdf>

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի 2025-26 տարեշրջանի կամաւոր կազմը

- Լեւոն Զաքարեան
- Նայիրի Ժուրաքելեան
- Սեւակ Ստեփանեան (Իսթիպար)
- Յարութ Զուլճեան
- Գրիգոր Պէքերեան
- Մհեր Ստեփանեան
- Վանի Թորաթեան
- Սարին Խշիշեան
- Աննա Մարիա Շամոյեան
- Ռիմա Խարշաֆճեան
- Հրակ Պանքեան
- Ալեքս Տեմիրճեան
- Սդեֆան Տեմիրճեան
- Մհեր Պանքեան
- Սեւակ Պապիկեան
- Առէն Պապիկեան
- Թամար Գիգիրեան
- Յասմիկ Նաճարեան
- Շողիկ Նաճարեան
- Թորոս Պապիկեան